

ՏԵՂԵԿԱԼՔ
**2013 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների
ընտրությունների արդյունքների մասին**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով) համապատասխան որոշումներով 2013 թվականի մարտի 17-ին, հունիսի 23-ին, հուլիսի 28-ին, հոկտեմբերի 13-ին և դեկտեմբերի 1-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 45 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են համայնքների ղեկավարների և ավագանու անդամների 32 հերթական և 13 արտահերթ ընտրություններ: 4 համայնքում կայացել են միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, 34 համայնքում՝ միայն համայնքի ղեկավարի, իսկ 7-ում՝ միայն ավագանու անդամների ընտրություններ:

Ըստ կուսակցական պատկանելության ընտրված համայնքի ղեկավարներից 1-ը Ազատ հայրենիք կուսակցության անդամ է, 4-ը՝ Արցախի ժողովրդավարական կուսակցության, 1-ը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության, մնացածներն անկուսակցական են: Վերընտրվել են ընտրված համայնքների ղեկավարների 56%-ը կամ 21 համայնքի ղեկավարներ, որոնցից 3-ը կանայք են:

Ընտրված 38 համայնքի ղեկավարներից 10-ը բարձրագույն կրթությամբ են, 19-ն ունեն միջին մասնագիտական կրթություն, իսկ 9-ը՝ միջնակարգ: Ըստ տարիքի համայնքի ղեկավարներից 17-ը 25-40 տարեկան է, 9-ը՝ 40-50, մնացածները՝ ավելի բարձր: Անցյալ տարվա տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) ընտրությունների համեմատ երիտասարդացել է ընտրված համայնքի ղեկավարների տարիքը, սակայն կրկնապատկվել է արտահերթ ընտրությունների քանակը (2012թ.՝ 7 արտահերթ ընտրություն), որը հետագա ուսումնասիրման խնդիր է շահագրգիռ մարմինների համար:

10 համայնքներում ընտրվել են 5-ական անդամներով ավագանի, իսկ 1-ում՝ 4 անդամով (Քաշաթաղի շրջանի Արախիշ համայնք): Ընտրված ավագանու 54 անդամներից 23-ը կամ 43%-ը կանայք են:

ՏԻՄ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում տարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ կազմավորվել են ընտրական տեղամասերը, ապահովվել ընտրությունների հրապարակայնությունը (հայտարարություններ, ցուցանակներ, պաստառներ, հաղորդագրություն տեղական մամուլում): Նրանք ժամանակին իրականացրել են ժամանակացույցով նախատեսված գործառնությունները, քվեարկության օրը ներկա են գտնվել ընտրական տեղամասերում, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները հետևել են Մարտունու շրջանի Վազգենաշեն համայնքի ղեկավարի ընտրության ընթացքին և արդյունքների ամփոփմանը:

ՏԻՄ ընտրությունների անցկացման համար նախատեսված ծախսերն իրականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի բյուջեով ընտրությունների համար նախատեսված միջոցներից, որը կազմում է 14 975 000 դրամ:

2013 թվականին ՏԻՄ ընտրությունների ժամանակ թեկնածուների կողմից մուծվել է 1 355 000 դրամ ընտրական գրավ, որից 1 210 000 դրամ գումարը ետ է վերադարձվել թեկնածուներին՝ ընտրվելու, ինչպես նաև վավեր քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու կապակցությամբ: Վավեր քվեաթերթիկների թվի 5 տոկոսից պակաս ստանալու պատճառով թեկնածուների ընտրական գրավը՝ 145 000 դրամի չափով, փոխանցվել է պետական բյուջե:

Կազմավորված 50 տեղամասերում ընտրական հանձնաժողովները համալրվել են մասնագիտական դասընթացներ անցած և որակավորում ստացած անդամներով, որոնց մասնագիտական գիտելիքների և պրակտիկ ունակությունների շնորհիվ ընտրություններն անցել են ընտրական օրենսդրության պահանջներին համապատասխան:

2013 թվականի ընթացքում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ է առաջացել Քաշաթաղի շրջանի Արտաշավի համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ (23.06.2013թ.), որի արդյունքում ընտրված է համարվել նույն թեկնածուն: Վերահաշվարկի ընթացքին հետևել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները:

2013 թվականի ընթացքում հրավիրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 9 նիստ, որտեղ ընդունվել է 16 որոշում: Որոշումների մեծ մասը վերաբերում է ՏԻՄ ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը: Քննարկվել և համապատասխան որոշումներ են ընդունվել աշխատանքային պլանով նախատեսված մի շարք հարցերի, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների դասընթացներ կազմակերպելու ժամանակացույցը և որակավորումներ շնորհելու կարգը հաստատելու, ինչպես նաև դասընթացների արդյունքներն ամփոփելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետներում իրականացվել են նախատեսված բոլոր միջոցառումները, որոնք վերաբերում են ՏԻՄ ընտրություններին, ընթացիկ ստուգայցերին, դասընթացների անցկացման ժամանակացույցին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից տրված հանձնարարականներին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿՄԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ